

**ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՐՄՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆ ՈՒ ԴՐԱ
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ
Մինասյան Ա. Ա.**

Ակադեմիական աշխարհագրության արդի խնդիրներից է կորսված գործառույթի վերականգնումը, այն է՝ պատվերի ստացում զինված ուժերից և բանակի ապահովում աշխարհագրական տեղեկատվությամբ: Նպատակահարմար ենք գտնում այս գաղափարով վերաձևավորել դպրոցական և բուհական դասընթացները՝ կիրառական աշխարհագրության տրամաբանությամբ աճող սերնդի գիտակցությանը հասցնելով «Աշխարհագրություն» գիտության բացառիկ ռազմավարական նշանակությունը հայրենիքի պաշտպանության և պետության ամրացման գործում:

Բանալի բառեր. աշխարհագրության գործառույթ, աշխարհագրության ռազմավարական նշանակություն, ռազմական աշխարհագրություն, աշխարհագրական գրագիտություն, աշխարհագրական կրթություն, կոնստրուկտիվ աշխարհագրություն, հայրենիքի պաշտպանություն, պետության կառուցում:

Ըստ 1919թ. Վերսալյան պայմանագրի՝ պարտված Գերմանիային արգելվում էր զբաղվել աշխարհագրությամբ և մասնավորապես ռազմական աշխարհագրությամբ, քանի որ այն համարվում էր ռազմավարական նշանակության գիտություն: Չնայած արգելքին՝ 1935թ. Գերմանիայի Ցամաքային զորքերի Գլխավոր շտաբում ստեղծվում է տեղագիրների ծառայություն, որի հիման վրա 1936 թ. ստեղծվեց Milgeo ռազմական աշխարհագրության բաժին: Նրանց ղեկավարության տակ աշխատում էին թվով 20 քաղաքացիական կազմակերպություններ, որոնք հետազոտում էին հետաքրքրություն ներկայացնող տարածաշրջանները: Եվ արդեն Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբին Գերմանիայի տրամադրության տակ էր գտնվում

Եվրոպայի 36 երկրների, Հյուսիսային Աֆրիկայի, Առաջավոր և Կենտրոնական Ասիայի, ՄՍՀՄ-ի խոշոր շրջանների՝ ներառյալ Ուրալը, ինչպես նաև խոշոր քաղաքների ռազամաշխարհագրական նկարագրերը: Milgeo բաժինը հավաքագրում, խմբագրում, տպագրում էր նյութեր և փախանցում դրանք գորքերին: Որպես կանոն՝ այդ նյութերը ներկայացվում էին 10-20 էջից կազմված մենագրության տեսքով, հազեցված էին քարտեզներով և նկարներով: Այդ աշխարհագրական նյութերը ռազմավարական լուրջ արժեք էին ներկայացնում, նախատեսված էին բանակի շտաբի համար, որպես լրացում դրանց կցվում էին նաև օպերատիվ /գրքույկի ձևով/ և մարտավարական բնույթի նշումներ /լուսանցքներում կատարվող գրառումների ձևով/: Նյութերում շեշտադրվում էին հաղորդակցման ուղիները, կողմնորոշիչները, արգելքները, քաղաքում տեղաշարժվելու ամենակարճ ճանապարհները: Ի տարբերություն Գերմանիայի՝ ԽՍՀՄ չունեի նման աշխարհագրական բազա: Բանակը զինված չէր համապատասխան քարտեզներով, աշխարհագետները չունեին մշակված նյութեր, որպեսզի շտապ կարգով տրամադրեին բանակին, իսկ ընթացող ռազմական գործողությունների պայմաններում դրանց ստեղծումը խիստ բարդանում էր: Հաճախ սեփական տարածքում նահանջը կազմակերպելու համար գորքը չունեի տաղագրական քարտեզներ, ինչը սաստիկ բարդացնում էր գործողությունների կազմակերպումը և մեծացնում կենդանի ուժի կորուստները: Ստեղծված դժվարին պայմաններում աշխարհագետները, ահռելի մեծ ծավալի աշխատանք կատարելով, ստեղծեցին տեղագրական քարտեզներ և տրամադրեցին զինված ուժերին, ինչը կարևոր գործոն դարձավ ռազմական և ռազմավարական խնդիրների լուծման ընթացքում: Աշխարհագրական տեղեկություններն անհրաժեշտ էին ինչպես ռազմական գործողությունների կազմակերպման, այնպես էլ երկրի ռեսուրսների արդյունավետ մոբիլիզացման համար: Խնդիրների լուծմանը ներգրավվեցին տարբեր ռազմական և քաղաքացիական գիտահետազոտական հիմնարկներ, այդ թվում նաև ԽՍՀՄ-ի Գիտությունների ակադեմիան, արդյունքում, պատերազմի ավարտին, արդեն ռազմաշխարհագետները ստեղծելի էին տեղագրական քարտեզների և տեղանքի նկարագրությունների ահռելի մեծ բազա: Անշուշտ պետք է նշել, որ նախահեղափոխական Ռուսաստանում աշխարհագրության և մասնավորապես ռազմական աշխարհագրության մակարդակը բավական բարձր է եղել, նույնիսկ Առաջին համաշխարհային պատերազմի նախաշեմին Ռուսաստանի

կայսրության բանակն ապահովված է եղել բարձրակարգ ռազմաշխարհագրական նյութերով: Ոլորտում մեծ դեր են ունեցել աշխարհագրության առաջամարտիկներ և ռահվիրաններ Ն. Մ. Պրժնալսկին, Մ. Ի. Վենյուկովը, Վ. Ի. Ռաբորովսկին, Մ. Վ. Պոտանինը և ուրիշներ, ովքեր ուսումնասիրել են կայսրության սահմանամերձ շրաններն ու ներկայացրել դրանց աշխարհագրական նկարագրերը: Մեծածավալ աշխատանք են կատարել ռազմական աշխարհագետներ, Գլխավոր շտաբի ակադեմիայի պրոֆեսորներ Ֆ. Ֆ. Շուբերտը, Վ. Յու. Սկալոնը, Ն. Ս. Գոլիցինը և հատկապես Դ. Մ. Միլյուտինը, որը հետագայում դարձավ ռազմական նախարար: Բոլոր նյութերը կենտրոնանում էին Գլխավոր շտաբի Ռազմավիճակագրական բաժնում, ուր դրանք խմբագրվում, լրամշակվում և պատրաստվում էին տպագրության: Հրատարակված նյութերը վերաբերում էին ինչպես սեփական երկրին, այնպես էլ հարակից երկրներին: Վերջիններիս վերաբերյալ տեղեկատվությունը առավել սովորածավալ էր: Բազմաթիվ աշխարհագրական արշավախմբեր 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին լուծում էին մեծապես ռազմական խնդիրներ: Աշխարհագրության և դրա ճյուղ հանդիսացող ռազմական աշխարհագրության ամուր կապն ապահովում էր Ռուսական աշխարհագրական ընկերությունը, որը երկար տարիներ գլխավորում էր ծովակալ Պ. Ֆ. Լիտկեն, նրանից հետո՝ ականավոր պետական գործիչ, աշխարհագետ, ճանապարհորդ Պ. Պ. Սեմյոնով Տյան-Շանսկին, որը նաև խորհրդատվություններ էր տրամադրում արշավախմբերի կազմում աշխատող ռազմական աշխարհագետներին: Ռազմական աշխարհագրության այդ շրջանի ձեռքբերումները հիմք հանդիսացան ակադեմիական աշխարհագրության զարգացման համար, սակայն Խորհրդային Միության գաղափարական և քաղաքական դրդապատճառներից ելնելով՝ գիտական փորձի մեծ մասը կորսվեց կամ անհրաժեշտ չափով չօգտագործվեց: Նվազեցնելով աշխարհագրության դերն ու նշանակությունը հասարակական կյանքում՝ Երկրորդ համաշխարհային պատերազմում ԽՍՀՄ-ն ունեցավ լուրջ բացթողում: Այնուամենայնիվ, խորհրդային տարիներին, չնայած աշխարհագրություն գիտության հարուստ ավանդույթներին և միջազգային փորձին, աշխարհագրությունը այլևս չէր ստանում բանակից ռազմաշխարհագրական բնույթի տեղեկության պատվեր: Այս հանգամանքն անդրադարձավ «Աշխարհագրություն» գիտության ընդհանուր վիճակի վրա: Այն սկսեց ընկավել իբրև ուսումնական-աշխարհայացքային

գիտակարգ: Հետագայում իրավիճակը որոշ չափով փոխվեց, և իրականացվեցին աշխարհագրական համալիր հետազոտություններ, ստեղծվեցին որակյալ քարտեզներ և այլ նյութեր, սակայն աշխարհագրության ու ռազմական աշխարհագրության միջև կապը խզված էր, և այն լիարժեք չվերականգնվեց մինչ օրս [1; 2; 3; 4]:

Ընդգծելով գլխավոր միտքը, այն է՝ **ակադեմիական աշխարհագրությունը այլևս բանակից չի ստանում ռազմաաշխարհագրական տեղեկության պատվեր**, նկատենք, որ աշխարհագրությունը կորցրեց իր գլխավոր գործառույթը՝ սպասարկել զինված ուժերը անհրաժեշտ աշխարհագրական տեղեկատվությամբ: Այսօրվա մեր իրականությունում նույնպես խզված է այդ կապը և սա լրջագույն բացթողում է հայ աշխարհագրական մտքի զարգացման գործում: Կարևոր է, որ ռազմական աշխարհագրությունը տեղայնացնի «Աշխարհագրություն» գիտության կողմից ձեռք բերված տեղեկությունը և հարմարեցնելով այն բանակի կարիքներին՝ փոխանցի այն զինված ուժերին: Կարևոր է, որ զինված ուժերը հարցապնդումներ և որոշակի առաջադրանքներ ներկայացնեն ակադեմիական աշխարհագրությանը, որպեսզի վերջինիս հետազոտության արդյունքները ծառայեն բանակի ամրացմանն ու իրենց ուրույն տեղն ունենան պետականաշինության գործում: Այդպես է եղել բոլոր հզոր պետություններում՝ Գերմանիա, Ճապոնիա, Իտալիա, նախահեղափոխական Ռուսաստան և այլն, այդպես պետք է լինի Հայաստանի Հանրապետությունում:

Կորցնելով զինված ուժերի կարիքներին ծառայելու գործառույթը՝ աշխարհագրությունը կորցրեց իր կիրառական նշանակությունը և դերը պետության և պետականության անվտանգության պահպանման գործում:

Հաշվի առնելով ՀՀ ներկայիս վիճակը՝ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել բանակ-ռազմական աշխարհագրություն-աշխարհագրություն կապի վերականգմանը, ինչը կնպաստի ռազմական գործողությունների, թիկունքի կազմակերպման, երկրի ռեսուրսների գնահատման և այլ խնդիրների լուծման արդյունավետության բարձրացմանը: Սակայն այստեղ առաջ է գալիս մեկ այլ խնդիր, այն է՝ ՀՀ ազգաբնակչության աշխարհագրական գրագիտության ոչ բավարար մակարդակը: Արցախյան երրորդ պատերազմի ընթացքում մարդկային ցավալի կորուստների մի մասը տեղի է ունեցել աշխարհագրական գիտելիքների պակասի պատճառով, երբ զինվորականները չեն ճանաչել շրջակա միջավայրը, չեն կողմնորոշվել տեղանքում, չեն կարողացել

օգտվել քարտեզից /եթե դրանք տրամադրվել են/, պատկերացում չեն ունեցել բնակավայրերի և դրանց կապող ճանապարհների մասին և այլն: Ի դեպ, զինվորականները նաև նշում էին, որ բավական մեծ տարածքներում տեղադրված չեն եղել կողմնորոշիչներ և բնակավայրի տեղանուններ, ինչը դժվարեցրել էր նրանց տեղաշարժը: Այս երևույթները տեղ են գտել մեր իրականության մեջ՝ չնայած այն հանգամանքին, որ աշխարհագրություն առարկան ուսումնասիրվում է հանրակրթական դպրոցում, և տեղագրության դասընթացներ իրականացվում են նաև բանակում: Ուրեմն ո՞րն է անբավարար արդյունքի պատճառը: Պատճառը ուսումնական առարկայի նկարագրական և ոչ գործնական բնույթն է, աշխարհագրությունը չի ձևավորում կիրառական գիտելիքներ, անհարժեշտ կարողունակություններ, ուստի և՛ բուհական, և՛ դպրոցական աշխարհագրության բնույթը հարկ է վերանայել: Հարցի նախնական լուծումը կարող է լինել հետևյալը. չխախտելով ուսումնական ծրագրերն ու առարկայի կառուցվածքը՝ ներմուծել գործնական առաջադրանքներ, որոնց կատարման համար անհրաժեշտ է աշխարհագրական քարտեզի և ուրվագծային քարտեզի կիրառում, կազմակերպել սեմինարներ, որոնք ուղղված են տարածական մտածողության զարգացմանը, և բոլոր դասողությունները պահանջում են թեմատիկ քարտեզների կիրառում: Նպատակահարմար է դպրոցական և բուհական աշխարհագրության բոլոր դասընթացներում ներառել ռազմաաշխարհագրական կարողությունների ձևավորմանը նպաստող առաջադրանքների համակարգ, որոնք հիմք կհանդիսանան համապատասխան տեղեկության ընկալմանը և գործողություն կատարելու կարողությանը: Նպատակահարմար ենք գտնում դպրոցում կազմակերպել միջառարկայական բնույթի դասեր աշխարհագրություն, նախնական զինվորական պատրաստություն և ֆիզիկական կուլտուրա առարկաների միջև, նյութի համալիր յուրացման, գործնական կարողությունների ձևավորման և ֆիզիկապես դրանց իրականացման ունակության ձեռքբերման նպատակով: Առաջարկում ենք նաև մանկավարժական բուհերի աշխարհագրության բաժնում պատրաստել մասնագետների, որոնք զինված ուժերում տեղագրությանը զուգահեռ կիրականացնեն «Հայաստանի ռազմական աշխարհագրություն» դասընթացը՝ ձևավորելով զինվորականների մոտ պատկերացում երկրի տնտեսական, կազմակերպչական, քաղաքացիական պաշտպանության, հատուկ ինժեներատեխնիկական միջոցառումների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ է իրականացնել

բնակչության անվտանգության, տնտեսական և ենթակառուցվածքային կարևոր օբյեկտների պաշտպանության նպատակով:

Հեռանկարում նպատակահարմար ենք գտնում դպրոցական և բուհական դասընթացները վերաձևավորել կիրառական աշխարհագրության տրամաբանությամբ, որի սաղմերն այսօր դիտարկվում են դպրոցական նոր ծրագրերի և չափորոշիչների նախագծում: Անցակցնելով այս գաղափարը աշխարհագրական կրթության ողջ համակարգով՝ հնարավոր է հասարակության գիտակցության մեջ ձևավորել աշխարհագրական մտածողություն, կարողունակություններ, որոնք կիրառելի կլինեն երկրի պաշտպանության և խաղաղ զարգացման պայմաններում:

Ամփոփելով միտքը՝ նշենք, որ ներկայումս ՀՀ-ն չունի աշխարհագրության զարգացման ոչ մի արգելք, փոխարենը ունի համալսարաններ, ուր գործում են «Աշխարհագրություն» գիտությամբ զբաղվող ամբիոններ, ուր գիտական հետազոտությունները չեն սահմանափակվում որևէ շրջանակով: Ակադեմիական աշխարհագրության արդի խնդիր կարելի է համարել նրա կարևոր գործառնությունների վերականգնումը, այն է՝ ռազմական աշխարհագրության միջոցով վերահաստատել սերտ կապ զինված ուժերի հետ, ստանալ նրանցից անհրաժեշտ հետազոտության պատվեր, ձեռք բերել նոր գիտելիք և տրամադրել այն բանակին: Համապատասխանեցնել այդ կարիքներին նաև դպրոցական աշխարհագրությունը և աճող սերնդի գիտակցությանը հասցնել «Աշխարհագրություն» գիտության բացառիկ ռազմավարական դերը հայրենիքի պաշտպանության և պետականաշինության գործում:

УТЕРЯННАЯ ФУНКЦИЯ ГЕОГРАФИИ И НЕОБХОДИМОСТЬ ЕЕ ВОССТАНОВЛЕНИЯ

Минасян А. А.

Одной из актуальных задач академической географии является восстановление утерянной функции-получение заказа от вооруженных сил и обеспечение армии географической информацией. Согласно данной идее, считаем целесообразным реконструировать школьную и вузовскую дисциплины по логике прикладной географии, доводя до сознания подрастающего поколения исключительную стратегическую роль географии в деле защиты Родины и укреплении государства.

Ключевые слова: функция географии, стратегическое значение географии, военная география, географическая грамотность, географическое образование, прикладная география, защита Родины, построение государства.

THE LOST FUNCTION OF GEOGRAPHY AND THE NECESSITY FOR ITS RECOVERY

Minasyan A. A.

One of the urgent tasks of academic geography is the restoration of the lost function - receiving an order from the armed forces and providing the army with geographic information. According to this idea, we consider it expedient to reconstruct school and university disciplines according to the logic of applied geography, bringing to the consciousness of the younger generation the exceptional strategic role of geography in defending the Motherland and strengthening the state.

Keywords: function of geography, strategic importance of geography, military geography, geographical literacy, geographical education, applied geography, defense of the Motherland, state building.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սալադյան Հ. Յա. Հայաստանի ռազմական աշխարհագրություն: Եր.: Հեղ.հրատ.: 2020: 315 էջ:
2. Абрамов Л.С. К 50-летию Победы в Великой Отечественной войне.// Серия географическая. 1995. N 3. С. 90-102.
3. Хомченко Н. И. Оперативное оборудование территории страны-функция государства.// Военная мысль. 1995. N 2. С. 38-41.
4. Brinyuk N. Yu., Korshunov E. L., Mikhailov A. A. «Geographers for the Great Victory!». New books on the place and role of geographical science during the Great Patriotic War. <https://history.ric.mil.ru/Stati/item/119207/> (04.09.2021)

Տեղեկություններ հեղինակի մասին

Մինասյան Ա. Ա. – մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հայկական պետական մանկավարժական համալսարան
Էլ. փոստ՝ minasyananahit@yandex.ru

Տրվել է խմբագրություն՝ 06.10.2021
Գրախոսվել է՝ 15.12.2021